DOI: 10.61484/29538181-ss.8.23-141

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՕՐՈՔ

Վահե Թորոսյան, Նարեկ Մարտիրոսյան
Երևանի Հայբուսակ համալսարան
Ընդունված է տպագրության 03.06.2023

Ամփոփագիր. Քննարկված է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության քայքայումը տնտեսական և քաղաքական ճգնաժամի պատճառով: Թեև սուլթանին հաջողվել էր ցաքուցրիվ անել «նոր օսմաններին» այնուամենայնիվ, նրանց կազմակերպությունների անդամները շարունակում էին գոյատևել եվրոպական երկրներում: Ընդդիմադիր ուժերի ակտիվացման համար նոր ազդակ ծառայեց դեռևս 19-րդ դարավերջին ծագում առած և 1908թ. սրված մակեդոնական ճգնաժամը: Նոր ձևավորված ընդդիմադիր ուժերի համար առաջնահերթություն էր փրկել Օսմանյան կայսրությունը վերջնական փլուզումից: Որպես այդ նպատակի միջոց, ընդդիմադիր ուժերը հրատապ էին համարում սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը: Հակասուլթանական շարժման գլուխ կանգնած էր «Իթթիհատ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կոմիտեն, որի անդամներին անվանում էին երիտթուրքեր:

Հիմնաբառեր՝ Ընտրական օրենսդրություն, Օսմանյան կայսրություն, ցեղասպանություն, երիտթուրքեր,ընտրական իրավունք.

Երիտթուրքերը հայ ազգային կուսակցություններին՝ հայ հեղափոխական դաշնակցությանը, սոցիալ դեմոկրատական հնչակյան և վերակազմյալ հնչակյաններին առաջարկեցին միասնաբար պայքարել սուլթանական վարչակարգի դեմ: Հնչակյանները հրաժարվեցին երիտթուրքերի հետ համագործակցությունից, քանի որ իթթիհատը մերժում էր Օսմանյան կայսրությունից անջատվելուն ուղղված ազգային փոքրամասնությունների իրավունքները:

1907թ. Վանում և Էրզրումում տեղի են ունենում հակակառավարական ցույցեր և հանրահավաքներ, որոնք հիմնականում գլխավորում էր դաշնակցությունը: Ստեղծվում է հեղափոխական իրադրություն, որը վարակի պես տարածվում է ողջ Փոքր Ասիայում: Գարնանը դաշնակցությունն իր չորրորդ ընդհանուր ժողովում որոշում է կայացնում համերաշխ համագործակցություն սկսել թուրք ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ՝ միաժամանակ հայտարարելով, որ հայությունը Թուրքիայում չի ունեցել և չունի որևէ անջատողական ձգտում [1]: Դաշնակցության այս կոչն անպատասխան չմնաց:

Դաշնակցական գործիչները դիմեցին համագործակցության՝ պատճառաբանելով, որ իրենք նախընտրել են չմերժել թուրքերի մեկնած ձեռքը և առաջնային նպատակ են համարել Համիդյան վարչակարգի տապալումը: Դաշնակցությունն իթթիհատի հետ ունեցած համագործակցության ողջ ընթացքում առանցքային է համարել նաև ապակենտրոնացման սկզբունքը, թեև իրականում դրա ջատագովը իշխան Սաբահէդինն էր, իսկ երիտթուրքերը, ընդհակառակը, ձգտում էին բացառել ցանկացած քայլ, որը Օսմանյան կայսրության որևէ հատվածի կանջատեր կայսրությունից: Բանակցությունների ընթացքում Ահմեդ Րիզա բեյը պահանջում է, որ ապագա վեհաժողովում ընդունվի սահմանադրության 113-րդ հոդվածը, որն ամրապնդում էր սուլթանի վեհապետական իրավունքները: Այդ, պահանջը բացասական արձագանք ստանալով հայերի կողմից, դուրս է նետվում օրակարգից [3]: Իրենց դիրքորոշումը հայերը հիմնավորել էին սուլթանի կողմից պետության զորքը և

բյուջեն իր հայեցողությամբ ապօրինի օգտագործելու փաստով: Այս հոդվածը դուրս էր մղվել նաև սահմանադրության «Հասարակական ազատություններ» ենթագլխից: Հետագայում այս փոփոխությունը տեղ գտավ բոլոր քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերում [4]:

Արդյունքում՝ 1907թ.-ի դեկտեմբերի 27-29 (1908թ. հունվարի 8-10-ը) Փարիզում կայացած վեհաժողովում Իթթիհատ վե թերաքքը կոմիտեի ներկայացուցիչները Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, Իշխան Սաբահէդդինի գլխավորած «Ապակենտրոնացման ու սահմանադրության օսմանյան միությունը», արաբական, հրեական և մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համիդյան վարչակարգը միասնաբար տապալելու և Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ: Որոշվեց կայսրության տարածքում գործող հակասուլթանական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմել մի մարմին «Մնայուն կոմիտե» անունով[5]: Այս մարմնի կազմը և գործունեությունը պետք է գաղտնի պահվեր: Կողմերը համաձայնության եկան երեք առանցքային պահանջների շուրջ՝

1. Աբդուլ Համիդի գահընկեցությունը,
2. Ներկա վարչակարգի արմատական փոփոխությունը,
3. Ներկայացուցչական վարչակարգի հաստատումը [6]:

Իրականում վեհաժողովում ընդունված հայտարարությունը ցույց էր տալիս, որ երիտթուրքերի կուսակցությունն անդրդվելի կանգնած է այն տեղում, ուր 1876թ. հաստատվել էր նրա նախահայրը՝ Միդհատ փաշան: Նրանք ոչ մի առաջադիմություն չէին արձանագրել: Փրկության միակ միջոց դիտվում էր սահմանադրականությունը [7]: Ուշադրություն չէր դարձվում դրա բովանդակությանը: Ուստի ընդդիմադիր ուժերի համագործակցությունը, բացառությամբ ՀՅԴ-իթթիհատի, շատ կարճ տևեց, ընդամենը մի քանի ամիս: Իրականում թելադրողը երիտթուրքական կուսակցությունն էր, որը ոչ մի հարցում առաջընթաց չուներ:

Աբդուլ Համիդի միահեծան կառավարմանը վերջ տալու համար մղվող պայքարը շուտով դրվեց գործնական հողի վրա: Դրա համար ազդակ հանդիսացավ Մակեդոնական հարցի սրումը: Ընդդիմադիր ուժերը համոզված էին որ, Մակեդոնիան կայսրությունից անջատվող հերթական երկիրն է, ուստի անգործության չէին կարող մատնվել: Երիտթուրքերը Մակեդոնիայում՝ զինվորականների շրջանում, ակտիվ քարոզչությամբ էին զբաղվում: Նրանք բացատրում էին թուրքական զինվորականությանը, որ անհրաժեշտ է վերականգնել 1876թ. Սահմանադրությունը՝ Օսմանյան կայսրության մասնատումը կանխելու համար: Երիտթուրքերի գաղափարները բավականին արագ և հաջողությամբ տարածվեցին զինվորականների մեջ: Արդյունքում՝ Մակեդոնիայի Մանասթըր քաղաքը դարձավ երիտթուրքերի կենտրոնը՝ Փարիզից հետո [8]:

1908թ. հուլիսին, Մակեդոնիայում տեղակայված օսմանյան զինվորական մասերը Նիազի և Էնվեր բեյերի գլխավորությամբ ապստամբում են: Աբդուլ Համիդի ուղարկած պատժիչ ուժերը, որոնք գտնվում էին իթթիհատականների քարոզչության ազդեցության ներքո, անցնում են ապստամբների կողմը: Սուլթանն իր գահը փրկելու համար համաձայնում է երկրում սահմանադրական կարգեր հաստատելու ընդդիմության պահանջին: Այսպիսով՝ 1908թ. հուլիսի 24-ին, Թուրքիայում տեղի է ունենում պետական հեղաշրջում, որից հետո սուլթանի իշխանությունը կրում է ձևական բնույթ: Երկրում

փաստացի իշխանությունը կենտրոնանում է երիտթուրք պարագլուխների ձեռքում: Օսմանյան կայսրությունը հռչակվում է սահմանադրական միապետություն:

Հեղաշրջումից հետո պանդխտությունից վերադարձան նաև Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության հայտնի գործիչներ Մեծն Մուրադը (Համբարձում Բոյաջյան) և Ս.Սապահ-Գյուլյանը [9]: Հնչակյանները 1909թ. հուլիսի 12-ի իրենց VI համագումարում վերահաստատեցին կուսակցության ծրագիրը և Օսմանյան կայսրությունում տիրող կարգերի նկատմամբ վերաբերմունքը: Ս.Դ. Հնչակյան գործիչները քննադատում էին ՀՅԴ-ին իթթիհատի հետ համագործակցելու համար և համոզվածություն հայտնում, որ իթթիհատը, օգտագործելով վարչական լծակները և կիրառելով ընտրախախտումներ, մեծամասնություն է կազմելու խորհրդարանում և փաստացի իր ձեռքում է կենտրոնացնելու իշխանության բոլոր լծակները:

Սահմանադրական միապետություն հիմնելու կարևորագույն նախապայման երիտթուրքերը համարում էին Օսմանյան խորհրդարանի ձևավորումը: Խորհրդարանի վերաբացումի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ իթթիհատը սկզբում չէր ցանկանում երկրի կառավարումն ուղղակիորեն իր ձեռքը վերցնել [10]: Երիտթուրքերը հեղաշրջումից առաջ և դրանից հետո՝ մի որոշ ժամանակ, առերես խոսում էին «ապակենտրոնացման» կարևորության մասին, մի կողմից ընդդիմադիր ուժերի հետ համագործակցությունը ապահովելու, իսկ մյուս կողմից ներքաղաքական և արտաքին քաղաքական սուր իրավիճակներում անմիջական պատասխանատվությունից խուսափելու համար: Այդ իսկ պատճառով նրանք փաստացի գործադիր իշխանությունը տվեցին Մեհմեդ Քյամիլ փաշային, ով «ճգնաժամային կառավա-րիչի» մեծ համբավ ուներ [11]: Երիտթուրքերը նախընտրել էին խորհրդարանում մեծամասնություն կազմելու միջոցով կառավարության հակակշռողի դերը [12]: Այս գործընթացին նրանք ձեռնամուխ եղան 1908թ. հուլիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում:

Երկրում երեսփոխանական ընտրություններ անցկացնելու մասին սուլթանի հրամանը հրապարակվեց 1908թ. օգոստոսի 2-ին, որին հաջորդեց մեծ վեզիր Սայիդ փաշայի շրջաբերական նամակը, որտեղ ներկայացված էին 1877թ. ընտրությունների մասին օրինագծի որոշ հոդվածների փոփոխման հիմնավորումները:

1908թ. սեպտեմբերին Իթթիհատի կենտրոնական կոմիտեն Սալոնիկում հրապարակեց նախընտրական իր ծրագիրը, ուր կարևորվում էր ընտրական նոր իրավունքի իրացումը, բնակչության կողմից սենատի 2/3-րդի ընտրությունը, երեսփոխաններին օրենսդրական նախաձեռնություն տրամադրելը և ազգային փոքրամասնություններին պատգամավորական տեղեր հատկացնելը [13]:

Երիտթուրքերի նախընտրական ծրագիրը առաջին հայացքից ուներ դրական բնույթ, քանի որ թույլ էր տալիս ընտրական օրենսդրության արդիականացման օգտին կատարել անհրաժեշտ փոփոխություններ և սահմանափակում էր սուլթանի վեհապետական իրավունքները: Սակայն իրականում այն հիմնավորում էր Իթթիհատի իշխանությունը:

Ընտրական օրենսդրության հիմքում ընկած էր 1877թ. խորհրդարանի ստորին պալատի կողմից մշակված օրինագիծը, որը ժամանակին չէր հաստատվել սուլթանի

կողմից: Թեև ընտրությունները վերահսկելու գործիքակազմ չկար, սակայն օրենսդրության մեջ կային կոնկրետ պահանջներ:

1877թ. ընտրական օրինագծի հիմքում ընկած էին ունեցվածքի, բնակության, տարիքային և կրթական արտոնակարգերը, ինչպես նաև թուրքերենի պարտադիր իմացությունը: Ընտրական այդ օրինագիծը ընտրելու իրավունք տալիս էր միայն այն անձանց, ովքեր պետությանը վճարում էին հինգ տեսակի այսպես կոչված «ուղղակի հարկերից» (տասանորդ, կալվածական, եկամտային, էսնաֆական, զինվորական,) մեկը, այսինքն՝ ճանաչում էին գույքի արտոնակարգը[14]: Ընտրությունների մեկնարկից առաջ մամուլում տեղեկություն է տարածվում, որ երիտթուրքերը կատարել են փոփոխություն ընտրական օրենքում, որի համաձայն ընտրական իրավունքից զրկվել են էսնաֆական հարկ վճարողները[15]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունում արհեստավորների և առևտրականների մեծամասնությունը քրիստոնյաներն էին՝ հույներ, հայեր և այլն, կարելի է եզրակացնել, որ երիտթուրքերը նախքան ընտրությունները որքան հնարավոր էր կրճատեցին քրիստոնյա առաջին կարգի ընտրողների շրջանակը: Իսկ երկրորդ կարգի համար, նրանք հասան ընտրական շրջանակի մեծացմանը, ընդգրկելով անասնահարկ և տասանորդ հարկ վճարողներին նույնպես: Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, ցանկացած պաշտոնյա պետք է թուրքերեն իմանար [16]: Այս հոդվածը տարածվում էր նաև օսմանյան խորհրդարանի պատգամավորների վրա:

Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին միայն արական սեռի ներկայացուցիչները, առանց ազգային և կրոնական խտրության: Յուրաքանչյուր 50.000 օսմանյան բնակչի բաժին էր հասնում 1 պատգամավոր: Սակայն 75 հազար բնակչի դեպքում թույլատրվում էր ունենալ երկրորդ պատգամավորը: Ընտրությունները երկաստիճան էին՝ «գաղտնի» և «հավասար» [17]: Գոյություն ունեին երկու կարգի ընտրողներ: Առաջին կարգի ընտրողները «գաղտնի» ընտրությունն էին կատարում: Նրանք ընտրում էին ոչ թե պատգամավորին, այլ երկրորդ կարգի ընտրողներին: Յուրաքանչյուր 250-750 բնակիչ ունեցող ընտրատարածքից կարող էր ընտրվել մեկ երկրորդ կարգի ընտրող [18]: Վերջիններս իրենց հերթին արդեն ընտրում էին պատգամավորին: Այն թեկնածուն, ով ձեռք կբերեր ավելի շատ երկրորդ կարգի ընտրողներ, հենց նա էլ կընտրվեր պատգամավոր: Կայսրության տարբեր շրջաններում ընտրություններն ավարտվում էին տարբեր ժամանակահատվածներում: Սովորաբար խորհրդարանի բացումից և մշտական հանձնաժողովների ձևավորումից հետո՝ մի շարք ընտրատարածքներում երկրորդ կարգի ընտրողները դեռևս պատգամավորի ընտրությունն իրականացրած չէին լինում: Այդպես եղավ բոլոր՝ թե՛ 1908թ. թե՛ 1912թ. և թե 1914թ. ընտրություններում:

Պատգամավորական մանդատ չէին կարող ունենալ 30 տարին չլրացած անձինք: Ընտրական օրենսդրությունը հստակ ուշադրություն էր դարձնում պատգամավորի քաղաքացիական և բարոյական նկարագրին: Պատգամավոր չէին կարող լինել դատարանի վճռով արգելանքի տակ գտնվողները, սնանկացածները, քաղաքացիական իրավունքներից կամ օսմանահպատակությունից զրկվածները և հասարակության մեջ արատավոր վարքով հայտնիները: Պատգամավոր դառնալու իրավունքից զրկված էին նաև կանայք, բանվորները և գյուղացիները [19]: Բացի նախարարներից, պետական պաշտոնյաները ևս

չէին կարող զբաղեցնել պատգամավորական աթոռներ: Պաշտոնատար անձը, պատգամավոր ընտրվելուց հետո, պետք է հրաժարվեր իր պաշտոնից:

Չնայած օրենսդրության սահմանած խիստ պահանջներին, թուրք և քուրդ աղաները ոչ միայն հայտնվեցին խորհրդարանում, այլև մեծամասնություն կազմեցին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ չկային ընտրությունները վերահսկելու մեխանիզմներ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ պահանջներից ամենաղժվար հաղթահարվողը սոցիալական արտոնագրերն էին: Փաստորեն Օսմանյան կայսրությունում պատգամավոր դառնալու հնարավորություն ուներ հասարակության միայն մի փոքր խավը: Հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում մինչ այդ տիրող սոցիալական և ազգային անարդարությունները, կարելի էր կանխագուշակել, որ ընտրելու և ընտրվելու համար սահմանված այսպիսի նշաձողի դեպքում խորհրդարանում ճնշող մեծամասնություն կազմելու էին էթնիկ թուրքերը և մյուս մահմեդականները, որոնց շարքերում գերակշռող պետք է լինեին բնակչությանը հարստահարող աղաներն ու փաշաները [20]:

Մյուս կողմից, ընտրությունները վերանայելու իրավունքը վերապահվում էր օրենսդիր գերագույն իշխանությանը՝ խորհրդարանին: Խորհրդարանը բացվելուց հետո անմիջապես զբաղվում էր իր անդամների տեղեկագրերի հաստատմամբ: Եթե որևէ պատգամավորի վերաբերյալ ընտրությունը կասկածի տակ դնող շատ բողոքներ կամ անհերքելի փաստեր էին ներկայացվում, ապա այդ մարդու տեղեկագիրը ուղարկվում էր իրավական հանձնաժողով, որտեղ կազմվում էր եզրակացություն և ուղարկվում խորհրդարան՝ այն հաստատելու կամ մերժելու: Մինչև հանձնաժողովի կողմից եզրակացություն կայացվելը և խորհրդարանի կողմից հաստատել կամ մերժելը՝ տվյալ պատգամավորի կարգավիճակը համարվում էր առկախված: Նա կարող էր ներկա գտնվել նիստերին, բայց զրկվում էր քվեարկելու իրավունքից: Այսպիսի կարգավիճակում հայտնվեցին իրենց բացասական վարքով աչքի ընկած և կեղծիքներով ընտրված Տիգրանակերտի պատգամավոր Բիրինջի զադե Ֆևզին և Ծապին Գարահիսարի պատգամավոր Մուսթաֆան [21]:

Ընտրությունները տեղի ունեցան հայ քաղաքական կուսակցությունների համար անբարենպաստ ժամանակաշրջանում՝ 1908թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին արմենականները (այն ինչ մնացել էր այդ կուսակցությունից) դեռևս չէին հասցրել համախմբվել, իսկ հնչակյանները, ընդհակառակը, պառակտվել էին [22]:

Իրավիճակը փորձեց շտկել Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը՝ գործի դնելով Ազգային ընդհանուր, քաղաքական և խառը ժողովները: Այս ժողովներում գերակշիռ դեր ուներ «Կեդրոն» խմբակցությունը, որում ընգրկվել էին Կ.Պոլսի ուևևոր դասակարգը, մտավորականությունը, Սահմանադիր Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները [23]:

Ընտրություններից առաջ իթթիհատականները դիմում են պատրիարքարանին, առաջարկելով իրենց ներկայացնել հայ թեկնածուների ցուցակը, որպեսզի իրենց երկրորդ կարգի ընտրողներին ուղղորդեն թե հայ թեկնածուներից ում ընտրեն: Իրականում դրանով երիտթուրքերը ցանկանում էին տեղեկացված լինել և վերահսկել հայ թեկնածուների

ընտրությունը: Այդպիսով երիտթուրքերը կկարողանային իրենց համար ցանկալի թեկնածուների ընտրությունը հաջողացնել:

Ընտրություններում հաջողություն ապահովելու համար երիտթուրքերը կայսրության տարբեր շրջաններ ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին, որոնց նպատակն էր տեղերում ստեղծել «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղեր ու ապահովել իրենց թեկնածուների հաղթանակը: Նրանք իրականացրին նաև նախընտրական խարդախություններ ու մեքենայություններ հայկական նահանգներից հայ պատվիրակների մուտքը օսմանյան խորհրդարան արգելակելու համար: Մասնավորապես հայաբնակ գյուղերը խմբավորում էին այնպես, որ թուրքերը, չնայած այս կամ այն շրջանում փոքրամասնություն լինելուն, ընտրության ժամանակ ստանում էին առավելություն [24]:

Այս ամենի հետևանքով էլ, ընտրված հայ պատգամավորների քանակը մեծապես տարբերվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող հայության ընդհանուր քանակին համապատասխանող և բոլորի կողմից սպասված թվից: Հենց այս պատճառով է, որ հայերը ընտրությունների ընթացքում և դրանից հետո բազմաթիվ բողոքներ ներկայացրին:

Բավական հետաքրքիր երևույթ էին բնակչության, տեղական իշխանությունների և պատգամավորների մասնակցությամբ ժողովները: Դրանց նպատակը բնակչության կողմից իրենց պատգամավորին պատգամ տալն էր: Այսպիսի մի իրադարձություն տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին և 19-ին Էրզրումում, որտեղ խոսեց նաև հայ պատգամավորներից մեկը[25]: Վերջինս իր ելույթում ընդգծել է պարտադիր կրթության և զինվորական ծառայության, ինչպես նաև կառավարության՝ խորհրդարանի առաջ պատասխանատվության խնդիրը:

1908թ.-ի դեկտեմբերի 4-ին (դեկտեմբերի 17) բացվեց Օսմանյան խորհրդարանը [26]: Օսմանյան խորհրդարանը երկպալատ էր: Այն բաղկացած էր երեսփոխանական ժողովից և սենատից (ծերակույտ): Սենատը ուներ 53 անդամ [27], որոնց 2/3-ը ընտրված էր, իսկ 1/3-ը՝ սուլթանի կողմից նշանակված: Ազգային պատկանելության առումով Սենատում տեղերը բաշխված էին հետևյալ կերպ՝ 41 թուրք, 4 հույն, 3 հայ, 2 հրեա, 1 բուլղարացի, 1 վալախ և 1 սերբ[28]: Հայ ծերակուտականներից էր Գաբրիել Նորատունկյանը [29]:

Երեսփոխանական ժողովի հայ պատգամավորները որևէ առնչություն չունեին սենատի՝ իրենց ազգակիցների հետ, բացի Գ. Նորատունկյանից: Նրանց միջև հարաբերություններն ի պաշտոնե կարգավորվում էր սահմանադրությամբ, իսկ արտախորհրդարանական շփումները հիմնականում պայմանավորված էին Արևմտյան Հայաստանում ընթացող իրադարձություններով, այդ թվում և ընտրությունների ժամանակ: Սենատում եռանդուն գործունեությամբ աչքի ընկնող Գ.Նորատունկյանն ընտրված էր:

Երեսփոխանական պալատը բաղկացած էր 275 պատգամավորներից, որոնցից 142-ը թուրքեր էին, 60-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ [30]: Կային նաև քուրդ պատգամավորներ, ինչպես օրինակ Իլիաս Սամին կամ Բիրինջի Զադե Ֆևզին, սակայն մինչ օրս հայտնի չէ թե քանի քուրդ պատգամավոր է եղել, քանի որ նրանք երիտթուրքերի կողմից դիտարկվում էին որպես թուրքեր և պատահական չէր, որ հետագայում դարձան նրանց հենարանը

խորհրդարանում: Ի դեպ՝ խորհրդարանի արձանագրություններում և մյուս փաստաթղթե-րում նրանց ազգությունը նշվում է թուրք: Օսմանյան կայսրության 27 միլիոն բնակչությունից թուրքերը քրդերի հետ միասին կազմում էին 8-10 միլիոն [31]: Հետևաբար նրանք խորհրդարանում կարող էին ունենալ 80-100 պատգամավոր: Հայտնի է, որ 1913թ. պատրիարքարանի ներկայացրած մարդահամարի արդյունքների համաձայն հայ բնակչության թիվը Արևմտյան Հայաստանում 1018.000 էր [32]: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պատրիարքարանի մարդահամարի արդյունքը ճշգրիտ չէր կարող լինել, մի կողմից հաշվի առնելով այն ժամանակվա մարդահամարի անցկացման գործիքակազմը, մյուս կողմից պետության կողմից հայերի թիվը դիտավորյալ քիչ ցույց տալու և այդպիսով մարդահամարի արդյունքները կեղծելու միտումը: Որպեսզի պարզորոշ երևա թուրքական իշխանությունների կեղծիքների ընդհանուր պատկերը, բավական է համեմատել երիտթուրքական իշխանությունների մարդահամարի արդյունքները հենց թուրքական իշխանությունների հետագա տարիներին իրականացրած մադրահամարի արդյունքների հետ: Եւ այսպես՝ ըստ 1906-1907թթ. մարդահամարի՝ Արևմտյան Հայաստանում ընդհանուր բնակչության թիվը հասնում էր 3.147.880-ի, որոնց թվում հայերը իբրև թե 561.774 էին [33]: Ըստ 1914թ. իրականացրած մարդահամարի՝ Արևմտյան Հայաստանում ընդհանուր բնակչության թիվը եղել է 3.880.343, որտեղ հայերի թիվը կազմել է 639.171 [34]: Հետագա տարիների թուրքական «ճշգրտված» տվյալներով՝ 1914թ. Արևմտյան Հայաստանում հայերի թիվը հասցվել է 912.601-ի, իսկ ամբողջ բնակչությունը՝ 4.973.429 [34]: Մեզ մոտ թուրքական «ճգրտված» արդյունքներից հավատ չի ներշնչում հատկապես հայերի թիվը: Ըստ Ա.Համբարյանի՝ Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմել է 2.583.692, որից 1.400.000-ը ապրել է Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում [36]: Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը և երիտթուրք-քերի իրականացրած ընտրակեղծիքների արդյունքում խորհրդարանում հայտնված հայ պատգամավորների նվազ թիվը՝ ընդամենը 5 պատգամավոր, պետք է ենթադրել, որ Համբարյանի նշած թիվը ամենաողջամիտն է:

Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներն էին Կ.Պոլսից՝ Գրիգոր Զոհրապը և Պետրոս Հալաճյանը, Իզմիրից՝ Ստեփան Սպարթալյանը (Սպարթալի), Իզմիթից (Նիկոմեդիա)՝ Հակոբ Պապիկյանը և Հակոբ Բոյաջյանը, Գոզանից՝ Համբարձում Բոյաջյանը (Մուրատ), Էրզրումից՝ Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո) և Վարդգեսը (Հովհաննես Սերենկուլյան), Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, Սեբաստիայից՝ բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, Վանից՝ Վահան Փափազյանը (Կոմս), Հալեպից՝ Հարություն Պոշկեզենյանը: Փաստորեն խորհրդարան անցած հայ պատգամավորների միայն կեսն էր Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից: Եթե հաշվենք Արևմտյան Հայաստանի նահանգներում հայերի քանակը, ապա Արևմտյան Հայաստանից ընտրված հայ պատգամավորների թիվը պետք է հասներ 10-12-ի: Իսկ այդ դեպքում ամբողջ Օսմանյան կայսրությունից ընտրված հայ պատգամավորների թիվը կհասներ 18-ի: Այս պարզ թվաբանությունը ակնհայտ է դարձնում, թե որքան անխափան է գործել երիտթուրքերի ընտրակեղծարար համակարգը:

Ինչ վերաբերում է կուսակցություններին ու կոմիտեներին, ապա՝ պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20-25-ը՝ ազատականներ (Ահրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կլուբիստներ, 1-ը՝ սոցիալ դեմոկրատ հնչակյան և 70-ը՝ անկուսակցականներ [9]: Ակնհայտ է, որ թուրքերը մեծամասնություն էին կազմել մի երկրի խորհրդարանում, որտեղ իրենք բնակչության թվով փոքրամասնություն էին: Իսկ իթթիհատը ապահովել էր կուսակցական մեծամասնություն: Խորհրդարանի նախագահ է ընտրվում իթթիհատական Ահմեդ Ռիզա բեյը: Առաջին փոխնախագահն էր Թալեաթ բեյը, իսկ երկրորդը՝ ազգությամբ հույն Յ. Արիստիդի փաշան:

Այսպիսով՝ չնայած հեղաշրջման միջոցով հաստատված «սահմանադրական կարգերին» և ընտրական օրենքի դրական ու բացասական փոփոխություններին, առաջինը հենց երիտթուրքերն էլ կոպտորեն ոտնահարեցին Օսմանյան հպատակների անձեռնմխելի ու հիմնարար իրավունքները, և առաջին հերթին ընտրության իրավունքը: Ընտրությունների անհավասար պայմանները և իրագործած ընտրակեղծիքները երևան հանեցին նրանց իրական նպատակները՝ խորհրդարանական մեծամասնության ապահովումը և իշխանության գաղտնի հակակշռողի քաղաքականությունը: Երիտթուրքերի կազմած խորհրդարանը իրականում չէր արտահայտում Օսմանյան Թուրքիայի ժողովուրդների կամքը: Խորհրդարանի հայ ներկայացուցչության թերությունը միայն քանակականը չէր, թեև սա առաջնահերթություն էր այնքանով, որքանով որ կապված էր հայ բնակչության իրական թվաքանակի և ընտրակեղծարարության տարբեր մեխանիզմների հետ:

Ոչ պակաս կարևոր բացթողում էր կուսակցությունների խիստ անհավասար ներկայացուցչությունը, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ իթթիհատը և դաշնակցությունը հանդես էին գալիս մեկ նախընտրական դաշինքով: Խորհրդարանում ներկայացուցչության նման պատկերը հետևանք էր արևմտահայության մի ստվար հատվածի քաղաքացիական ցածր գիտակցության, քարոզչական թերի աշխատանքի, ինչպես նաև իրենց իշխանությունն ամենուրեք չարաշահող և կրոնական անհանդուրժողականություն քարոզող երիտթուրքերի դիմաց՝ հայ քաղաքական կուսակցությունների պառակտվածության:

Գրականության ցանկ

1. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք առաջին, Երևան 1982, էջ 119:
2. Տես՝ Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան 1992, էջ 424:
3. A. K u r a n. Osmanlı Imparatorluğunda Inkilâp Hareketler ve Milli Mücadele. Istambul, 1956, s. 445:
4. Tarik Zafer Tunaya, Turkiye'de Siyasal Partiler, Cilt 1: Ikinci mesrutiyet donemi, 1908-1918, Istanbul 1988, s. 5.
5. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, Երևան 2006, էջ 240:
6. Լեո, Անցյալից, Երևան 2009, էջ 206:
7. Տես՝ Լեո, նույն տեղում, էջ 208:
8. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, Երևան 2006, էջ 487:

9. Համբարյան Ա.Ս., Հայ հասարակական քաղաքական միտքը Արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX-րդ դարի վերջ և XX-րդ դարի սկիզբ), Երևան, 1990, էջ 351:
10. Ժամանակ, 21.02.1909:
11. Никифоров К.В., История Балкан. На переломе эпох (1878-1914гг.), Москва 2017, с 437.
12. Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, Առաջին մաս,Կ.Պոլիս, 1919, էջ 32:
13. Тунян В.Г., Младотурки и Армянский вопрос, Часть первая, 1908-1912гг., Ереван, 2004, с.63-64.
14. Բյուզանդիոն, 10.09.08:
15. Տես՝ նույն տեղում:
16. Թոփչեան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 140:
17. Хнкоян Н.С. , Выборы 1912 года В Турции и формирование антимладотурецкого блока, Լրաբեր, Երևան 1990, N 7, с. 46.
18. Ճերեճյան Ե.Կ., Մեծն Մուրատ (Հ. Բոյաջյան), Եր., 2016, էջ 140:
19. Шпилькова В.И., Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977, с194-195.
20. Սապահ-Գիւլեան Ս., Երիտասարդ Թուրքիա, Պարիզ, 1908թ., էջ 27:
21. Բյուզանդիոն 11.12.1908:
22. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատոր Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 428:
23. Ճերեճյան Ե.Կ., Մեծն Մուրատ (Համբարձում Բոյաջյան), Եր., 2016, էջ 141:
24. Տես՝ Шпилькова В.И., նշվ.աշխ., էջ 196:
25. Տես՝ Шпилькова В.И., նշվ.աշխ., էջ 198:
26. Բյուզանդիոն, 5.12.1908:
27. Տես՝ Шпилькова В.И.,.նույն տեղում:
28. Տես՝ Шпилькова В.И.,.նույն տեղում:
29. Տես՝ Փափազյան Վ., նույն տեղում:
30. A. K u r a n. Osmanleimparatorluğunda inkilâp hareketler ve milli mücadele. Istambul, 1956, p 477:
31. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում(1908-1914), Երևան, 1979, էջ 14:
32. ՀԱԱ, ֆ. 57,.g 1., գ. 399, թ. 6:
33. M. Servet, Late Ottoman population and its ethnic distribution, Nüfusbilim dergisi, Turkish Lournal of population Studies, 2003, 25, 3-38, p 11.
34. Տես՝ M. Servet, p 24:
35. Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 1969, N2, էջ 98-114:

Торосян В., Мартиросян Н. - ОСНОВНАЯ ПРОБЛЕМА ОСУЩЕСТВЛЕНИЯ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ВО ВРЕМЯ МЛАДОТУРКОВ. В конце 19 и начале 20 веков Османская империя продолжала рушиться из-за экономического и политического кризиса. Особо сложной была внутриполитическая и внешнеполитическая

обстановка. Хотя султану удалось победить «новых османов», члены их организаций продолжали выживать в европейских странах. Новым импульсом для активизации оппозиционных сил, берущей начало в конце 19 века и закончившейся в 1908 году, послужила активизация оппозиционных сил. обострился македонский кризис. Приоритетом новообразованных оппозиционных сил было спасение Османской империи от окончательного краха. В качестве средства для достижения этой цели оппозиционные силы считали неотложным свержение режима султана Абдул Хамида. Во главе антисултанского движения стоял комитет «Иттихат ве Теракк» («Союз и прогресс»), членов котор называли младотурками или младотурками.

Ключевые слова: Избирательное законодательство, Османская империя, геноцид, младотурки, избирательные права.

Torosyan V.E, **Martirosyan N. - THE BASIC PROBLEM OF THE EXERCISE OF VOTING RIGHTS IN THE OTTOMAN EMPIRE DURING THE DAY OF THE YOUNG TURKS**. In the late 19th and early 20th centuries, the Ottoman Empire continued to crumble due to economic and political crisis. The domestic and foreign political situation was particularly difficult. Although the sultan managed to defeat the "new Ottomans", members of their organizations continued to survive in European countries. A new impetus for the activation of the opposition forces, originating in the late 19th century and ending in 1908, served. the Macedonian crisis escalated. The priority for the newly formed opposition forces was to save the Ottoman Empire from final collapse. As a means to that end, the opposition forces considered the overthrow of Sultan Abdul Hamid's regime urgent. At the head of the anti-Sultan movement was the "Ittihat ve Teraqq" ("Union and Progress") committee, whose members were called Young Turks or Young Turks.

Keywords: Electoral legislation, Ottoman Empire, genocide, Young Turks, electoral rights.